

ԱՐՏԱԿ ԿԱՐԴԱՆՅԱՆ

ՃԱՆՈՒՎ-ՎԱՅՔԻ
ՄԻՋԲԱՐՔԱՌԻ ԲՈՒՍՏԱՆՈՒՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ՃԱՀՈՒԿ-ՎԱՅՔԻ ՄԻՋԲԱՐԲԱՌԻ
ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐԸ**

ԵՐԵՎԱՆ



ՀՀ ԳԱԱ ԼԻ

2022

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը

ՀՏԴ 811.19'28:811.19'373

ԳՄԴ 81.51-025.7+81.51-3

Վ 301

*Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների դոկտոր
Հայկանուշ Մեսրոպյան
Գրախոս՝
բանասիրական գիտությունների դոկտոր
Վիկտոր Կատվալյան*

Վարդանյան Արտակ Վարդանի

Վ 301 **Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները /** Ա.
Վարդանյան.– Եր.: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի
ինստիտուտի հրատ., 2022.– 64 էջ:

*Գրքում առաջին անգամ ուսումնասիրվել է
Ճահուկ-Վայքի միջբարբառի (պատմական Նախճա-
վան, Ճահուկ և Վայոց ձոր գավառների տարածքի
խոսվածքներ) բառապաշարի բուսանունների շերտը:*

ՀՏԴ 811.19'28:811.19'373

ԳՄԴ 81.51-025.7+81.51-3

ISBN 978-9939-9298-0-4

© Արտակ Վարդանյան, 2022

*Գործընկերքս՝
անվանի բարբառագետ
Ալբերտ Խաչատրյանի
հիշատակին*

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Բուսանունների և հարակից բառաշերտի առանձնացումը կարևոր է հայերենի ընդհանուր բառապաշարի ուսումնասիրության համար: Գերաշնորհ Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյանը հոր՝ Կարապետ Գաբիկեանի «Հայ բուսաշխարհ» գրքի առաջաբանում գրում է. «Հայը երկրագործ, բնութեան ու դաշտի ժողովուրդ, ունեցած է մասնաւոր սէրը բնութեան...: Այդ իսկ պատճառով մեր լեզուին մէջ այնքան առատ է բուսական ու երկրագործական բառապաշարը..., սակայն մեր լեզուի բուսանունները կը մնան ցրուած եւ կարօտ բանասիրական ստուգաբանութեան»:

ԱհաՎասիկ, ընթերցողի սեղանին է Արտակ Վարդանյանի հերթական աշխատանքը՝ «Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները» վերնագրով, որը, որոշ առումով, նաև հեղինակի հոգու պարտքն է իր նվիրական բնօրրանի հանդեպ: Մտովի ունենալով բաղձալի ծննդավայրի՝ Նախիջևանի Ազնաբերդ գյուղի պատկերը՝ Արտակ Վարդանյանն իր հիշողության ամբարից զատել, թեմային

առնչվող հրապարակումներից ու բառարաններից առանձնացրել, բարբառակիրների հավաստումները գրառել, դասդասել և գիտական ոճով ներկայացրել է Ճահուկ-Վայքի (Հյուսիսային Նախիջևանի և Վայոց ձորի) բուսանունները, դրանց առնչվող ժողովրդական ավանդությունները, բույսով պայմանավորված ավանդույթներն ու հավատալիքները, ծիսապաշտամունքային գործառույթները:

Ինչպես հայտնի է, Հայկական լեռնաշխարհի փաթեթամ բուսականության յուրաքանչյուր բուսատեսակ ունի մեկից ավելի, երբեմն մեկ տասնյակի հասնող գրական և բարբառային անվանումներ, որոնց ուսումնասիրությունը տևական աշխատանք և գիտելիք է պահանջում:

Բուսական աշխարհի հատկանշող իմաստային բառաշերտի քննությամբ արտացոլվում է ոչ միայն խնդրո առարկա տարածքի բուսապատկերը, այլև բացահայտվում է բնակիչների լեզվամտածողությունը, աշխարհընկալումը, բանահյուսական բանաձևումների հիմքը, կենցաղային առանձնահատկությունները և այլ իրողություններ:

Որպես բարբառային բառապաշարի մաս՝ բուսանունները բուն իմաստից բացի, փոխաբերացված, անձնավորված կամ իմաստային տարբերակվածությամբ, դրական կամ բացասական երանգավորումով պահպանված են հատկապես բարբառային խոսքում, ժողովրդական բանավոր ստեղծագործություններում: Մարդուն բույսի կամ պտուղի հետ նույնացնելը (*վարդ*՝ «աղջիկ», *խնձոր*՝

«հարս» և այն), բույսը որպես խորհրդանշան ընկալելը (*սոխ* և *սխտոր*՝ «չարի խափանում», *վարդ քաղել*՝ «սեր խոստովանել, ամուսնության առաջարկ անել» և այլն) բնորոշ է ժողովրդական պատկերավոր մտածողությանը: Մի շարք բույսեր ունեն խորհրդանշական, սնոտիապատական, դավանաբանական, արվեստաբանական բովանդակություն, որոնք էլ պատճառ են դառնում բուսանունների՝ գործուն բառապաշարի մաս կազմելուն:

Գրքում ներկայացված բուսանունները, շարադրանքի գիտական ոճով պայմանավորված, հիմնականում հանդես են գալիս որպես բուսաբանական գիտաբառեր, որոնք խոսքային այլ որակներում կարող են հանդես գալ նաև որպես խոսքային սովորական միավորներ:

Որոշակի բույս նշող անուններից բացի, գրքում գետեղված են նաև *բույս* հասկացությանն առնչվող, բույսից ածանցյալ, բույսի արդյունք՝ «բար», «պտուղ» հատկանշող բառեր, դրանցով բաղադրված որոշ մանրատեղանուններ ու հատկանուններ, որոնց մի մասը գիտական ճշգրտություն է ստանում հեղինակի կողմից կատարված ստուգաբանություններով, վկայաբերված պարսկերեն, արաբերեն, թյուրքերեն, ռուսերեն փոխառյալ համարժեքներով:

Գրքում ի մի բերված «բույս» հասկացությանը վերաբերող բազմաթիվ տեղեկությունների շնորհիվ հեղինակը գիտելիք է հաղորդում բուսանունների տեղավայրի, տեսակային բաշխման, արտաքին նկարագրության, բուժական հատկանիշների, հարևան ժողովուրդների կող-

մից դրանց տրվող օտարաւուսնչ անվանումների, դրանց հայերենացման և արժեքավոր այլ փաստերի մասին: Աշխատանքը նաև յուրօրինակ հիշատակարան է Նախիջևանի մասին և կարող է վստահելի աղբյուր հանդիսանալ հայրենի բնաշխարհը, ընդհանուր բնապատկերը բավարար ճանաչելու համար, այլ կերպ ասած՝ բուսանունն այստեղ հայրենի հողի վկայագիր է:

Բարեխիղճ գիտնականի պատասխանատվությամբ, թեմային վերաբերող տպագիր նյութերի քաջագիտակությամբ, բառարանային հարակից փաստերը համադրելու հմտությամբ շարադրված բարբառագիտական այս մանրակրկիտ աշխատանքը արժեքավոր է ոչ միայն լեզվաբանների, այլև բուսագետների, աշխարհագետների և այլոց համար: Լեզվական առկա հարուստ նյութը, գրքի կառուցվածքը, իմաստային ենթախմբերի առանձնացման եղանակները օգտակար կարող են լինել բառապաշարի իմաստային այլ խմբեր ուսումնասիրելու համար:

Ինչպես հայտնի է, բացատրական բառարաններում բուսանունները հաճախ մեկնաբանվում են «բույսի մի տեսակ» ընդհանուր ձևակերպումով: Այս նկատառումով է Գ. Թորոսյանը իր «Կարնո բարբառի Շիրակի խոսվածքին հատուկ բարբառային բառերի քննություն» աշխատանքում նշում. «Բարբառային բառերը քննելով՝ բարբառագիտական բառարաններում հաճախ ենք հանդիպում դժվարությունների, քանի որ բառերի մի սովոր խումբ գրառված չէ և կարոտ է լուսաբանման: Ուստի առաջարկում ենք հայ բարբառագիտությամբ զբաղվող

մասնագետներին ձեռնամուխ լինել այդ շնորհակալ գործին»։ Այս աշխատանքը գալիս է համալրելու, պարզաբանելու, նաև ճշգրտելու մի շարք բուսանունների ընդհանուր նկարագիրը։

Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները ի մի են բերված գրքի «Հավելված» բաժնում, որը պատրաստի նյութ է ուսումնասիրողների և բառարանագիրների համար։

Հայկանուշ Մեսրոպյան
բանասիրական գիտությունների դոկտոր

ՆԱԽԱԲԱՆ

Բույսերի զարմանահրաշ աշխարհը իր ուրույն և անփոխարինելի դերն է ունեցել մարդկության գոյության ողջ ընթացքում: Վաղնջական ժամանակներից բույսը կիրառվել է ոչ միայն որպես հագուստի, տան, սննդի, դեղորայքի, զարդարանքի և այլնի բաղադրատարր, այլև սրբացվել և պաշտվել է՝ խորհրդանշելով կյանքի հաղթանակը մահվան դեմ և հավերժական կյանքն ու հավերժությունը:

Հայերիս կենցաղում և արժեհամակարգում նույնպես հնագույն ժամանակներից լայնորեն կիրառվել և պաշտամունքի առարկա են բույսերը: Մեր ժողովրդի կրոնածիսական պատկերացումների առանցքային բաղադրիչներից մեկը եղել է Կենաց ծառը, իսկ բարդին, կաղամախին, սոսին, նոճին, գլխին և բազմաթիվ այլ ծառեր, խոտաբույսեր ու ծաղիկներ պաշտամունքի առարկա են եղել: *Սոսի* ծառանունը, անտարակույս, կապ ունի Արարատյան թագավորության Խալդի աստծու *սոսի* տաճարի հետ, իսկ նույն ծառանվան՝ Արցախի բարբառի *տնջրի* տարբերակի հիմքում *տաճար* արմատն է, և

բուսանունն ունի *տաճարի ծառ* իմաստը: Ուշագրավ է նաև, որ Համբարձման տոնի տեսքով մեր օրերը հասած հնագույն բնապաշտական տոնը քրիստոնեական ժամանակներում ծառ ու ծաղկի պաշտամունքի յուրօրինակ վերապրուկ-դրսևորում է: Բնության արարիչ Արա աստծուն, ապա ավելի ուշ՝ դիցապաշտ Արամազդին նվիրված բնապաշտական տոն է եղել հայոց մեջ նաև Ամանորը, որ հնագույն շրջանում նշվել է գարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ին::

Վաղնջական ժամանակներից եկող՝ բույսերի և ծաղիկների պաշտամունքի վերապրուկներ են նաև հայերիս անձնանուններ մեջ Շուշան, Վարդ, Մանուշակ, Սոսե, Հասմիկ, Ասպուրակ, Նունուֆար, Մեխակ, Ասպրամ («ռեհան»), Անթառամ, Սալբի («նոճի»), Սալվինազ («նոճու նազանք ունեցող»), Հիրիկնազ («հիրիկի նազանք ունեցող», ժողովրդական ստուգաբանությամբ՝ Հերիքնազ) և այլ անունների առատությունը:

Հայերենի բարբառներում պահպանվել են բուսանունների յուրօրինակ տարբերակներ, որոնք, լինելով մեր լեզվի բառապաշարի ամենակիրառական շերտերից, բացառապես են ոչ միայն տվյալ տարածքի ավանդույթներն ու ազգագրական առանձնահատկությունները, այլև տարբեր ժամանակաշրջաններում այլ ժողովուրդների հետ ունեցած շփումները:

Մեր ժամանակներում, ցավոք, բուսանունների բարբառային տարբերակները հաճախ մոռացվում են, կամ դրանց փոխարեն կիրառվում են գրական, հաճախ

էլ՝ օտար համարժեքները, ուստի յուրաքանչյուր բարբառային միավորի բուսանունների ամբողջական ուսումնասիրությունը ոչ միայն անհրաժեշտ է, այլև հրատապ:

Սույն աշխատանքում ուսումնասիրված են հայերենի բարբառներից մեկի՝ Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները:

Աշխատանքի նորույթը և նպատակն է բարբառային այս միավորի՝ առանձին ուսումնասիրության նյութ չդարձած բուսանուններն ընգրկող բառաշերտի քննությունը և հնագույն շերտերի վերհանումը: Հետազոտությունն իրականացվել է համաժամանակյա և տարածամանակյա մեթոդներով:

Ճահուկ-Վայքի միջբարբառը հայերենի բարբառների արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբի միջբարբառ է: Անվանվում է նաև Վայոց ձորի միջբարբառ: Բարբառային հատկանիշներով միջակա դիրք է գրավում Արարատյան և Զուղայի բարբառների միջև, փոքր-ինչ հեռացած է Արցախ-Սյունիքի բարբառից: Անվանվել է նաև Վայոց ձորի միջբարբառ: Խոսվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի, Աղավնաձոր, Արփի, Գնդեվազ, Գնիշիկ, Խաչիկ, Կեչուտ, Հորս, Չիվա, Ռինդ, Վերին Ազնաբերդ գյուղերում: Մինչև 1988 թվականը խոսվում էր նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Ազնաբերդ (պատմական Նախճավան գավառ) և Օծոփ (պատմական Ճահուկ գավառ) գյուղերում: Անցյալում ընդգրկել է պատմական Վայոց ձոր, Ճահուկ գավառները և Նախ-

ճավան գավառի հյուսիսային հատվածը: Ըստ ավանդական միահատկանիշ դասակարգման՝ պատկանում է հայերենի բարբառների *Ում* ճյուղին, ունի բաղաձայնների երկաստիճան ձայնեղագուրկ համակարգ: Հնչյունական համակարգն ունի 43 հնչյուն՝ 34 բաղաձայն, 9 ձայնավոր: Գրական հայերենի հնչյուններից տարբերվում են *ü, ö, iii* քմային ձայնավորները, *q, ʎ, p* քմային բաղաձայնները և *nʰ* շնչեղ ձայնորդը: Բառակազմում ձայնեղ պայթականները և պայթաշփականները վերածվում են համապատասխան խուլերի (բանջար > *պանջար*, գարուն > *կարունք*, դալար > *տանար*, ձագ > *ծար*||*ծաք*, ջորի > *ճորի*), բառամիջում և բառավերջում ընդհակառակը՝ խուլերն են անխտիր ձայնեղանում (շապիկ > *շարիք*, ճակատ > *ճագատ*, արածել > *ըրածիլ*, պճեղն > *պըջեղ*): Աճառյանի օրենքը գործում է մասնակիորեն՝ առավելապես *դ*-ով սկսվող բառերում: *U, ü, p, n* ձայնորդներից առաջ առկա է *n* > *ni* հնչյունափոխությունը (ծոմ > *ծում*, Թորգոմ > *Թորգում*, կոկոն > *կուգում*, մեռոն > *մէռուն*, կորնգան > *կուռընգա*, Օրբել > *Ուռբել*, ծոռն > *ծուռը* («թոռան գավակ»), կոռն > *կուռը* («թոռան թոռ»): Որոշ գյուղերի խոսվածքներում բառակազմի **hn** հնչյունակապակցության դիմաց առկա է *ʃo* (հող > *ʃոդ*, հոտ > *ʃոդ*, հորել > *ʃորիլ*, հորթ > *ʃոռթ*): *q, ʎ, p* հետնալեզվային բաղաձայնները բառակազմում և բառամիջում առաջին շարքի *է, ի, ü, ö, iii* ձայնավորներից առաջ անխտիր վերածվել են իրենց

քմային տարբերակներին (*կինդ, քերիլ, գօրուդ, մանգէդ, քսրանթու, գիլսս*): Էր, նի/նէր հիմնական հոգնակերտներից բացի, կիրառական են նաև *ք* (ըրէխա-ըրէխէք), *էրք* (տըղա-տըղէրք), *ինք* (մառնթ-մառնթինք), *անիք* (կընիգ-կընանիք) մասնիկները: Հոլովման համակարգում պահպանվել է *ո* հոլովիչը (վօսկի-վօսկօ, մըդանի-մըդանօ, հոքի-հօքօ, կիւնի-կիւնօ, կաշի-կաշօ): Բացառականը հիմնականում կազմվում է միաժամանակ *ից* և *էն* վերջավորություններով (ախպէր-ախպօրէն//ախպօրից(ը): Բոլոր հոլովները, բացառությամբ սեռականի և *էն*-ով բացառականի, ստանում են որաշյալ հոդ: Բաշխական թվականները կազմվում են քանակականների կրկնությամբ (*մին-մին, էռէտուն-էռէտուն, հսրիր-հսրիր*): Դասական թվականներն են *ւն^հշի* («առաջին»), *վէռ^հշի* («վերջին»), *յէդի* («հաջորդ», նաև՝ «երկրորդ»), ինչպես նաև *ըւ* (<ում) ածանցով կազմված ձևերը (*էրգըսըւ, տասսըւ, հսրըրըւ*): Անձնական դերանունները հոլովվում են դերանվանական հոլովման համակարգում, որտեղ բացառականը կազմվում է տրականի հիմքով և միաժամանակ *անէ* և (*ան*)*ից* վերջավորություններով (Ես-իւձանէ//իւձանից, տութ-ծէզանէ//ծէզանից): Բայն ունի երկու լծորդություն՝ *է* և *ա* (*ւն*). *է* լծորդության բայերը, սակայն, անորոշում ունեն *իլ* վերջավորությունը (*քընիլ-քընէւ, ադալ-ադամ, գիդանալ-գիդանամ*): Ապառնի դերբայը կազմվում է անորոշ դերբայով և *օ* վերջավորությամբ (*լըսիլօ, ադալօ*,

թըռնիլօ, պընցանալօ, թիլանալօ): Սահմանականի ապառնին և անցյալ ապառնին կազմվում են անորոշ դերբայով և *պիտեմ* բայի մաշված ձևերով (*լըսիլ'դէմ//լըսի'բդէմ, լըսիլ'դիմ//լըսի'բդիմ*), իսկ շրջուն շարադասության, հարադրական բայերի և ժխտական խոնարհման դեպքերում երևան են գալիս ապառնի դերբայով և օժանդակ բայով ձևեր (*յէս էմ լըսիլօ, լըսիլօ չէմ, յէս իմ քընալօ, քընալօ չիմ, լյնց էմ ըլիլօ, պար իմ կալօ*):

Աղավնաձորի, Արփիի, Գնիշիկի և Խաչիկի խոսվածքներում, սակայն, *պիտեմ* բայի մաշված ձևերով կազմված ձևերին զուգահեռ կիրառվում են նաև ապառնի դերբայով և օժանդակ բայով ձևերը (*լըսիլօ էմ, լըսիլօ իմ*)¹:

Պատմականորեն² և աշխարհագրորեն³ տարածված լինելով թե՛ լեռնային, թե՛ նախալեռնային գոտիներում, նախկինում՝ մասամբ նաև հարթավայրերում, միջբարբառն ընդգրկում է բույսերի անվանումների բավական բազմազան շրջանակ:

¹ Ա. Վարդանյան, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004:

² Ա. Վարդանյան, *Ճահուկ-Վայքի միջբարբառի տարածման պատմական սահմանները*.– Գ. Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված «Արդի հայերենագիտության խնդիրները» առցանց գիտաժողովի նյութեր, Ե., 2020:

³ Ա. Վարդանյան, *Նախիջևանի բարբառային քարտեզը*.– Հանդէս ամսօրեայ, հ. 1-12, Վիեննա, 2000, էջ 457-470:

ՄԻՋԲԱՐԲԱՌԻ ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԽՄԲԵՐԸ

Ստորև կանդրադառնանք Ճահուկ-Վայքի միջ-
բարբառի բառապաշարի բուսանունների շերտի իմաս-
տային խմբերում լեզվաբանական առումով որոշակի հե-
տաքրքրություն ներկայացնող մի շարք բուսանունների,
կստուգաբանենք չստուգաբանված բուսանունները, իսկ
դրանց առավել ամբողջական ցանկը կբերվի Հավել-
վածում:

Վայքի խոտաբույսերից հետաքրքրական են հե-
տևյալ բուսանունները.

Դադաշ («տատասկ») - Տատասկ բառի հնչյունա-
փոխված ձևն է՝ տատասկ > *տատաշկ > *տադաշ > դա-
դաշ: Տեղի է ունեցել հնչյունափոխության յուրօրինակ
երևույթ՝ բառամիջի ձայնեղացած խուլը առնմանությամբ
ձայնեղացրել է նաև բառասկզբի խուլին (ինչպես Կիրա-
կոս > *Կրրւնգօւ > Գրրւնգօւ, պոպոք > պօքօք > բօքօք և

այլն): Ի դեպ, Ագուլիսի բարբառում առկա է բուսանվան միջանկյալ տատաշ ձևը⁴:

Խումբաբա // *խումբաբաբա* («խատուտիկ») - Միջբարբառում պահպանված հնագույն փոխառություններից է, որը ևս մեկով լրացնում է ասորաբաբելերենի միջոցով հայերենին փոխանցված շումերական փոխառությունների շարքը⁵: Որ բուսանունն ամենայն հավանականությամբ ուղղակիորեն բխում է շումերական «Գիլգամեշ» դյուցազներգության Խումբաբա (շումերերեն՝ *Huwawa*, ասորաբաբելերեն՝ *Humbaba*) հրեշի անունից, հաստատում են այս բուսանվան՝ բարբառային հայերենում առկա բազմաթիվ հնագույն տարբերակները՝ *խըտուտ*, *խըպուպ*, *խապուպիկ*, *հապըպուկ*, *բուբու*, *պուպու*, մանավանդ Բայազետի (*խումբաբա*), Դիադինի (*գըմբաբա*) և Վասպուրականի տարածքի այլ բարբառներում առկա համանման ձևերը, որոնք ավելի հարազատորեն են պահպանել հնագույն ձևը: *Խումբաբայի* հետ *խումբաբայի* ոչ պատահական նմանությունն են հաստատում այս բուսանվան տարածքային մյուս տարբերակները՝ *սատանի ճրագը* և *ակլատիզը*⁶: Երկուսն էլ հուշում են *խատուտիկի* հրեշային-պաշտամունքային ծագումը: Առաջինի

⁴ Ն. Աճառեան, *Քննություն Ագուլիսի բարբառի*, Ե., 1935, էջ 133:

⁵ Ա. Վարդանյան, «Գիլգամեշի» Խումբաբան և հայերեն բարբառային խմբաբա բուսանունը, Իրան-Նամե, հ. 37, 2001, էջ 23:

⁶ Ռ. Ղազարյան, *Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան*, Ե., 1981, էջ 40:

հրեշային իմաստն ակնհայտ է, իսկ երկրորդը Մեծ պահքի հովանավոր Ակլատիզ հրեշի անունն է: Մեծ պահքի և Զատիկի խորհրդանիշ յուրօրինակ օրացույց-խամաճիկը (սոխի վրա ճառագայթաձև խրված յոթ փետուր՝ սերմնակալած խատուտիկի համաբանությամբ) տոնին նախորդող յոթ շաբաթներին կախվում էր տների երդիկներից, յուրաքանչյուր անցնող շաբաթվա հետ փետուրներից մեկը հանվում, իսկ վերջին փետուրի հանելն ավետում էր Զատիկը⁷:

Կաջաջ («ավելուկանման բույս») - Ամենայն հավանականությամբ *կաճապ* բուսանունն է (ըստ Հ. Աճառյանի՝ «նուիկ խոտը»⁸, ըստ Ստեփան Մալխասյանցի՝ «անորոշ տեսակի բույս, որը Ամատունին նոյնացնում է սպիտակաբանջարի հետ, իսկ Հայքուսակը նոյնացնում է նուիկի կամ նուիճի հետ, որոնք բոլորովին տարբեր բույսեր են»)⁹: Կարծում ենք, որ «վիճելի» բուսանունը հենց *կաջաջն* է. խոսվածքում նախ տեղի է ունեցել բառամիջի խուլերի ձայնեղացում, ապա բաղաձայնների առաջընթաց առնմանություն՝ կաճապ > կաջաբ > *կաջաջ*): Կաճապը բարձր ցողուններով, ավելուկանման խոշոր տերևներով և վառ դեղին, աղվամազի պես նուրբ ծա-

⁷ **A. Vardanyan**, *The Assyro-Babylonian Khumbaba and the Armenian Plant Name Khmbaba*, Iran & the Caucasus, V, 2001, Tehran, p. 207-208:

⁸ **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. Բ, Ե. 1973, էջ 497:

⁹ *Հայերեն բացատրական բառարան*, կազմեց Ս. Մալխասեանց, հ. Բ, Ե., 1944, էջ 372:

ղիկներով թփանման բույս է, որի դալար ցողուններն ուտելի են: Բուսանունն ակնհայտորեն ունի *կաճ* («թաղիք», «աղվամագ», «բուրդ») արմատը:

Ղանդալ - Կարծում ենք՝ *կանկառ* բառի՝ պարսկերենի կամ թուրքերենի ազդեցությամբ հնչյունափոխված ձևն է, այլ բարբառներում անվանվում է նաև *կառ* (մանուշակագույն խոշոր ծաղիկներով փշոտ բույս է): Հավանաբար *կանկառ* (*արտիճուկ*) բույսը իր անունը ստացել է այս բույսի ծաղիկներին նման լինելու պատճառով: *Ղանդալ կըռձիլ* արտահայտությունը միջբարբառում կիրառական է «երկարատև, տաժանակիր աշխատանք կատարել» նշանակությամբ:

Քսրվանդրոան - Փշոտ տափաստանային այս բույսը անցյալում հավաքում, մարագներում պահում էին որպես ձմեռվա անասնակեր (ավանակի և այծի), նաև որպես թոնրի կպչան, իսկ ձմռան վերջում ավանդաբար դրանով էին վառում Տյառնընդառաջի խարույկը այդ պատճառով էլ կոչվում էր նաև *Դառանջի* (*Տյառնընդառաջի*) *փուշ*: Ամենայն հավանականությամբ անունը ստացել է Ազնաբերդ գյուղի հարավային հատվածով անցնող Մետաքսի ճանապարհին (*Քսրվանի ճամփա*) և շրջակայքում առատորեն աճելու և քարավանի ճանապարհը փակելու պատճառով (թրք. բրբ. karvan qıran («քարավան կտրող»):

Վայրի ուտելի և օգտակար խոտաբույսերից հետաքրքրություն են ներկայացնում հետևյալ բուսաանունները.

Աղինջ («եղինջ») - Միջբարբառում հին հայերենի *ը* և *ղ* ձայնորդներին նախորդող՝ բառասկզբի *ե*-ի դիմաց առկա է *ա* (երկանք-*արգանք*, երկաթ-*արգաթ*, երագ-*արագ* և այլն): Բարբառային հնագույն տարբերակներ համարվող¹⁰ այս բառերի շարքում է նաև *աղինջ*-ը (< եղիճ)՝ ն հնչյունի հավելմամբ:

Անգուղան («առանձնահատուկ բուրմունքով մանդականման բույս») - Հին հայերենում *անգուտան* ձևով ավանդված հնագույն բուսանուններից է¹¹: Հ. Աճառյանը *անգուտանը* մեկնում է որպես «տեսակ մի բոյս ու համեմ»՝ *անճիտան*, *անկիտան* հնչյունական տարբերակներով և ստուգաբանում որպես փոխառություն պարսկերենից (պրսկ. انگودان angudān («ոետին ունեցող մի ծառ՝ որի խեժը կոչվում է անգուժատ»))¹²: Ըստ երևույթին՝ այս ծառի խեժի հոտը հիշեցնող անգուտանի սուր հոտի պատճառով է բույսը կոչվել ծառի անունով: Ի դեպ, Ջուղայի բարբառում նույնպես այս բույսը *անգուտան* է

¹⁰ Է. Աղայան, Բարբառային հնագույն տարբերություններ հայերենում - ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների տեղեկագիր, թիվ 5, Ե., 1958, էջ 67-80:

¹¹ *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, Վենետիկ, 1865, էջ 48: Ղ. Ալիշան, *Հայբուսակ կամ հայկական բուսաբանություն*, Վենետիկ, 1895, էջ 36:

¹² Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Խ. Ա. Ե. 1971, էջ 185:

կոչվում, իսկ հում վիճակում օգտագործվող դալար ցողունը՝ *տրդոզան*:

Աշի («մանդակ») - Բուսանվան շատ հաճելի համը հուշում է, որ այն կարող է առնչվել հին հայերենի *օշ* («երանի») ձայնարկությանը: Վերջինս միջբարբառում ունի երկու ձև՝ *ււշի* (*Աշի՛ դէ, քընանք բաղը* («Երանի թե գնանք այգին») և *ււշ* (*էս ինչ անօշ կիհի էր, ււշ* («Այս ինչ քաղցր գինի էր, օխա՛յ»): Ի դեպ, բույսը դալար վիճակում տապակում են, նաև կտրատած համեմում թանապուրը, իսկ դալար ցողունները ուտելի են հում վիճակում կամ աղ դրած:

Խինձը («սինձ») - Բարբառի այն հազվագյուտ բառերից է, որոնցում առկա է *u > h* կամ *u > hu* հնչյունափոխությունը (սինձ > *խինձը*, կարծես > կասէս > կահէս), որը բնորոշ է Ագուլիսի բարբառին (ասել > *ահիլ*, տեսնել > *տիհնիլ*, և այլն)¹³: Մնձի ատամատերև տեսակը կոչվում է *ծիյան խինձը* («ձիու սինձ»):

Կուռընգա («կորնգան») - Տեղի է ունեցել միջբարբառին բնորոշ՝ *ը, ռ, մ, ն* հնչյուններից առաջ *օ > ու* հնչյունափոխություն՝ կորնգան > կուռընգա (ինչպես՝ մոքելի > *մուրէխ*, բոքոն > *բօքուն*, Հոռոմ > *Հուռում*, Դեբորա > Թեբուր և այլն) և բառավերջի *ն*-ի անկում:

Շօմի («վայրի սպանախ») - Փոխառություն է պարսկերենից (պրսկ. شومين šomin («սպանախ»): Ագուլիսի

¹³ **Հ. Աճառեան, Քննություն Ագուլիսի բարբառի**, էջ 133-134:

բարբառում առկա է *շումին* ձևը, Արցախ-Սյունիքի բարբառում՝ *շումին* տարբերակը,

Պանջյւր («սպիտակաբանջար») - *Բանջար* բառանունը իմաստի նեղացմամբ որոշակիորեն ստացել է *սպիտակաբանջարի* իմաստ, ինչպես Նոր Նախիջևանի բարբառում *փանջար* ձևով՝ *թելուկ* իմաստը, Խոյի բարբառում՝ *պանջյւր* ձևով *եղինջ* իմաստը և այլն: Անգամ Համշենի բարբառում *պօնջար* ձևով ունի «բաց թերթերով կաղամբ» իմաստը¹⁴:

Պօխի, պօլի - հովանոցավորների ընտանիքի բույսեր: *Պօխին* («Ժախ, ձիասամիթ») դառնավուն համ ունի, *պօլին*՝ քաղցրավուն: Ղ. Ալիշանը «Հայբուսակ»-ում նշում է *բոլի, բօլի* և *բոլիկ* ձևերով¹⁵, սակայն կարծում ենք, որ նախնական ձևը հինհայերենյան *բողն*¹⁶ է, որից ծագել են այս երկու ցեղակից բույսերի անունները: Հետաքրքիր է, որ *բողը* բարբառում պետք է դառնար *պօլ*, սակայն, քանի որ հին հայերենում հոլովվել է *n* հոլովիչով (*բող-բողոյ*), իսկ բարբառում միայն *ի*-ով վերջացող բառերն են ստանում *n* հոլովիչը (քամի-*քամօ*, մրդանի-*մրդանօ*, հիլի-*հիլօ* և այլն), *ի* ձայնավորի հավելումը տեղի է

¹⁴ **Հ. Աճառյան**, *Քննություն Համշենի բարբառի*, Ե., 1947, էջ 222:
Հ. Խաչատրյան, *Բառիմաստային յուրօրինակ զարգացումները Համշենի բարբառում*. – Գ. Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հայերենագիտական գիտաժողովի նյութեր, Ե., 2020, էջ 84:

¹⁵ **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 95:

¹⁶ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ.1, Վենետիկ, 1836, էջ 503:

ունեցել բառի սեռական հոլովի ազդեցությամբ, ինչպես միջին հայերենի *պայլ*-ից («մեծ իշխան») բխող *պէլն* է դարձել *պէլի* («կնքահոր հայր»)՝ կրկին *n* *հոլովիչով* հոլովվելու պատճառով (*պայլ-պայլոյ*):

Sou («գագ») - Հավանաբար կապ ունի հին հայերենից ավանդված *գագ* ձևի հետ՝ *գագ* > **hnu* > *ֆou*: Բույսի գնդաձև, վարդագույն, անթառամ ծաղիկներով տեսակը կոչվում է *մըզան ֆou* («մկան գագ»)։ Օգտագործվում է որպես վառելիք և կպչան, իսկ սովորական *ֆուսի* արմատների վրա գոյացած խեժը (*ֆուսի յէղ*)՝ որպես աստամնացավը հանգստացնող միջոց, նոր ժամանակներում՝ նաև տեխնիկական յուղ ստանալու հումք։

Մշակովի և բանջարանոցային բույսերից առավել ուշագրավ են հետևյալները.

Բաղըմջան («լոլիկ») - Երբեմն նույն իմաստով օգտագործվում է նաև *կարմիր բաղըմջան* բառակապակցությունը։ Փոխառություն է պարսկերենից՝ իմաստի փոփոխությամբ (պրսկ. *بادنجان* *bādenjān* («սմբուկ»)), իսկ սմբուկը միջբարբառում ունի *սէվ բաղըմջան* ձևը, որտեղ *սէվ* բաղադրիչը հավելվել է լոլիկին *բաղըմջան* անվանելու հետևանքով։

Լօփ (< լոփ < լովիաս) - Կիրառական է նաև *մաշ* («կանաչ լոփ») բառը։ Վերջինս փոխառություն է պարսկերենից (պրսկ. *ماش* *māš* («մանր, կանաչ լոռ»))։

Կընջէռ («կանճրակ») - Ձիթատու սպիտակ սերմերով փշոտ բույս է *կընջէռը* (*սաֆլոր*)։ Սերմերը

օգտագործվում են աղանձի մեջ, ինչպես նաև բուսայուղ (*խին*) պատրաստելիս: Կարծում ենք՝ *կնջէռ* (< *կնճեռ, կնճեր, կանճեր) ձևը ավելի հին է, քան *կանճրակ*-ը:

Կուգուռուզ/վիըղսմբսր/վիըխսմբսր («եգիպտացորեն») - Առաջինն ավելի ուշ շրջանի փոխառություն է ռուսերենից (ռուս. *кукуруза* «եգիպտացորեն»), երկրորդը պարսկերեն *پيغمبر* *peygambar* («մարգարե») բառն է, որը միջբարբառի որոշ խոսվածքներում ունի *վիըղսմբսրի* *ցորէն* («մարգարեի ցորեն») ձևը:

Ղավուն («սեխ») - Փոխառություն է թուրքերենից (թրք. *kavun* («սեխ»), իսկ *ղըռա* («խակ սեխ») բառը ամենայն հավանականությամբ կապ ունի բարբառի *ղոռա* («խակ խաղող») բառի հետ, որն էլ փոխառություն է պարսկերենից (պրսկ. *گوره* *gure* «խակ խաղող»): Ի դեպ, նույն համաբանությամբ, օրինակ, Արաբկիրի բարբառում *ազոխը* ունի թե՛ «ազոխ» և թե՛ «որևէ խակ պտուղ» նշանակությունները¹⁷: Հնարավոր է, որ *ազոխ*-ի հետ կապ ունենա նաև միջբարբառի *խօզուզ* («խակ վարունգ, դդում, սեխ, ձմերուկ») բառը:

Տընդըմ («դդում») - Տեղի է ունեցել ձայնավորների առաջընթաց ներդաշնակություն և *ն*-ի հավելում (դդում > տըդում > տըդըմ > *տընդըմ*): Համեմունքներ, գինի և այլն պահելու համար օգտագործվող սնամեջ դդումը, որ ավելի վաղ ժամանակաշրջաններից է հայտնի տարածա-

¹⁷ Զ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. Ա, Ե., 1971, էջ 87:

շրջանում, բարբառում կոչվում է *սօրայի տընդըմ* («սիրիական դդում»), որը, անշուշտ, փոխառություն է պարսկերենից (պրսկ. سریایی soryayi («սիրիական»):

Թէր («ծոթրին, կորթին») - Հնարավոր ենք համարում բուսանվան ծագումը արաբերեն *سعتار sa'tar* («ծոթրին») բուսանունից: Չի բացառվում նաև առնչությունը պարսկերեն *تاره tare* («պրաս») սուր համով և հոտով բուսանվան հետ:

Կողիմ («կոտեմ») - Ինչպես նկատվում է, բարբառը առավել հարազատորեն է պահպանել հինհայերենյան *կոտիմն* ձևը:

Քւնվւն («պրաս») - Մխտորանման և սխտորահամ սոխ է, վաղ գարնանն օգտագործում են տերևները: Հավանաբար, անունը առնչություն ունի բույսի պարսկերեն *تاره tare* անվանման հետ:

Ծաղկանուններից առավել հետաքրքրական են հետևյալները.

Բաղի կաբիդ ծաղիգ («տերեփուկ») - Նկարագրական բնույթի այս ծաղկանունը ծագել է տերեփուկ ծաղկանվան իմաստի մթագնամաբ և առավելապես խաղողի այգիներում աճելու պառճատով է կոչվում «խաղողի այգու կապույտ ծաղիկ»:

Կուշկոդրիգ («կուժկոտրուկ») - Կարմիր, փայլուն ծաղիկներով, սև միջուկով այս ծաղիկը կարմիր ադոնիսն

է: Ըստ ավանդության՝ կուժկոտորուկը տուն բերելիս տան կուժը կամ կավե որևէ այլ ամանեղեն կոտրվում է:

Զօմախալալա, օխտն ախպօր արին («աղբրանց արյուն»)՝¹⁸ - Առանց տերևների, շագանակագույն ցողունով, ալ կարմիր թավշանման այս ծաղիկը առաջին անունը ստացել է գավագանի՝ *չոմախի* տեսք ունենալու պատճառով, իսկ երկրորդի հիմքում մի ավանդազրույց է, ըստ որի կովում զոհված յոթ քաջ եղբայրների արյունն է ծաղիկներ դարձել:

Մարի տեղին ծաղիգ - Միջբարբառում կրկին նկարագրական բնույթի անվանում ունի լեռնային *զնարբուկ*, *զինարբուկ* կամ *զինարբ* ծաղիկը, որը Վանի, Շատախի, Մոկսի բարբառներում կոչվում է *սոսուն*, Կարնո բարբառում՝ *հորոտ-մորոտ* և այլն:

Հատապտղանուններից հատկանշական են հետևյալ բառանունները.

Հավալօլօգ («ագնվամորու համով, բալանման հատապտուղ») - Արտաքուստ *հավամրգուն* (ռուս.՝ ве-реск), *լոռամրգուն* (ռուս.՝ клюква), և կարմիր հապալասին (ռուս.՝ брусника) նման այս հատապտղի անվան հետ, անշուշտ, կապ ունեն հավամրգի և լոռամրգի հատապտղանունները, մանավանդ որ հին հայերենից չավանդված *լօլօգ* (< *լոլոկ) բառը բարբառում ունի հենց «միրգ, հատապտուղ» իմաստը:

¹⁸ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 22:

Մըհասունը («մասունք») - Հ. Աճառյանը կապում է թուրքերեն *mayasəl* («թուրք») բառի հետ, ինչպես հայերենում *թուրք* պտղի անունն է առնչվում *թուրք* հիվանդության անվան հետ¹⁹: Ի դեպ, միջբարբառում արաբերեն *بواسير* *bavāsir* («թուրք») ձևից էլ բխում է նույն հիվանդության *բաբասիլ* անունը:

Շյագըռդան («դեղին, կլոր, քաղցր մասունք») - Մասունքի վաղահաս այս տեսակը ուտելի է հում վիճակում, թփերն ու ծաղիկները նման են մասրենուն, ծաղիկները նույնպես դեղին են: Հավանաբար բուսանունը առնչություն ունի պարսկերեն *شاگرد* *šāgerd* («աշակերտ») բառի հոգնակի *شاگردان* *šāgerdān* ձևի հետ:

Սելվասանուջ («սև հատիկներով հատապտուղ») - Հ. Աճառյանը վկայել է բուսանվան՝ Ագուլիսի բարբառում առկա *սելվսանիճ*, *սելվյանիճ* ձևերը²⁰: Ազնաբերդի և Օծոփի խոսվածքներում, սակայն, կիրառական էր փոխառյալ *արդարասի* հոմանիշը, որը կրկին *սև* արմատն ունի (թրք. բրբ. *qara* («սև»):

Թփերով աճող այս հատապտուղը հասունանալիս կանաչ հատիկները նախ սպիտակում են, ապա, օրեր անց, կարմրում, իսկ լիովին հասունանալիս՝ սևանում: Հատապտղի մասին տարածաշրջանում պահպանվել է

¹⁹ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. Գ, Ե., 1977, էջ 265:

²⁰ Հ. Աճառեան, *Քննություն Ագուլիսի բարբառի*, Ե., 1935, էջ 133:

Ժողովրդական հանելուկ, որտեղ նրա հասունանալը համեմատվում է զորգ կամ կարպետ գործելու հետ՝

Էնինչ-քէնինչ՝

Կանանչ հինեմ, սիպտանգ ասպէմ,

Կարսիր կօռձէմ, սէվ կըղրէմ:

Քսնվնն («կապար») - Արարատյան բարբառում

օձի ձմերուկ անվանմամբ հայտնի այս հատապտղի հասունացած-ճաքած պտուղների միջուկը տարածաշրջանում ուտելի է՝ առանց ծամելու, քանի որ կորիզները խիստ կծու են:

Պտղատու ծառերի և թփերի անուններից ուշադրության են արժանի հետևյալները.

Գըլլնն («բալ») - Օծոփի խոսվածքում առկա է ծառանվան *գըննն* հնչատարբերակը: Պարսկերենի բարբառային որևէ տարածքում հավանաբար *բալլ* ընկալվել է որպես *կեռասի* տեսակ՝ گیلās-e anār («նռան կեռաս, նռնակեռաս»), որը Ուրմիայի (Խոյի) խոսվածքները փոխառել են *գիլանար* ձևով: Վերջինից էլ, անշուշտ, միջբարբառը փոխառել է հիշյալ երկու ձևով. առաջինում *ն*-ն առաջընթաց առնմանությամբ դարձել է *լ*, իսկ երկրորդում՝ հակառակը՝ *լ*-ն է հետընթաց առնմանությամբ *ն* դարձել:

Հաղող//հալօղ («խաղող») - Այստեղ *խ* հնչյունը տարնմանությամբ դարձել է *հ* (ինչպես խաղաղ > *հաղաղ*, խաղ>*հաղ*, խեղճ>*հէղջ* և այլն): Խակ խաղողը բարբառում

ունի *ηοσιαι* («ագոխ») ձևը, որը փոխառություն է պարսկերենից (պրսկ. غوره *gure* «խակ խաղող»):

Խաղողը տարածաշրջանի ամենատարածված մշակաբույսերից է, որտեղ վաղնջական ժամանակներից մշակել են խաղողի հնագույն տեսակներ: Բավական է նշել, որ ըստ ավանդության՝ Ազնաբերդի հարևան պատմական Ագարակ (այժմ՝ Ղարաբաղլար) գյուղի տարածքում է հետջրհեղեղյան առաջին բնակավայրը և առաջին խաղողի այգին հիմնել Նոյ նահապետը, իսկ գյուղից ոչ հեռու պահպանվել է նաև Սեմի աղբյուրը (*Մսևո ախպուր* < Սեմոյ աղբիւր):

Խաղողի տարածաշրջանային տեսակներն են՝ *կաղվի անշկ* (< *կատվի աչք), դեղնականաչավուն խիտ հատիկներով խաղող՝ ոսկեհատ, խարջի); *խաչխանջի* (ոսկեհատին նման խաղող), անունը ստացել է հիմնական ողկույզի վերին մասում երկու առանձին զնգուռ ունենալու և խաչի նմանվելու պատճառով); *մեննաձաղիլի, բոմբոն*, սպիտակ, խոշոր խաղող՝ սեղանի, խաչաբաշ. առաջինը *մենն-մենն զիլի* բառակապակցության ամփոփ ձևն է, երկրորդի արմատը, հավանաբար, փոխառություն է ռուսերենից (ռուս. бонда («ռումբ»); *միլադ*, նախորդի կարմիր տեսակն է, անվանումը հավանաբար կապ ունի *մանյագ* տեսակի անվան հետ; *գոնյի* (պրս. گلاب *golāb* («վարդաջուր»)), մուգ վարդագույն, խոշոր հատիկներով խաղող; *էճապրդուգ* («իծապտուկ»); *դանվի*

կըղըղոր («ուղտի կտտոր»), սպիտակ և վարդագույն շատ խոշոր, երկարավուն խաղող; *կառան տըմազ* (< *գառան դմակ); *մսլսն* (արաբ. ملك malek («թագավոր»), սև ընտիր խաղող՝ արենի; *մըղմըմ* (պրս. آله darre «ալ ձոր»), կանաչ, խոշոր, կոշտ կեղևով կախանի խաղող; *չըրաղմըմ* (պրս. چراغ آله čerağ āl darre («լուսավոր «մըղմըմ»), դեղնասպիտակ, թափանցիկ խաղող՝ երևանյան, մսխալի); *Մուսէսի հաղող* («Մովսէսի խաղող», մանուշակագույն, քիչ խոշոր հատիկներով երկարավուն խաղող; *դմըմսմըմ* (թրք. բրբ. qara sürmə («սև սուրմա»), սև, կոշտ կեղևով կախանի խաղող; *սարահաղող*, սև, կոշտ կեղևով՝ զինու հյութեղ խաղող; *ռննգի* (պրս. رنگی rangi («գունային»), սև գույնի, զինուն մուգ գույն հաղորդող խաղող; *մսկյմը* (թրք. əsgər («զինվոր»), երկարավուն, նուրբ, սպիտակ, չամչի խաղող՝ նազելի; *քիշմիշ*, սպիտակ, վարդագույն և սև տեսակներով չամչի անկորիզ խաղող՝ քիշմիշ:

Շսֆտսլու («կորիզից պոկվող դեղձ», «կորիզից չպոկվող՝ սպիտակ դեղձ») - փոխառություն է պարսկերենից (պրսկ. شفتالو šaftālu («կորիզից պոկվող դեղձ»); *հուլի* («նարինջ դեղձ»), դարձյալ փոխառություն է պարսկերենից (պրսկ. هلو holu («դեղձ»):

Ոչ պտղատու ծառերի և թփերի անուններից հետաքրքիր են.

Համբարում («գնդաձև խիտ թեղի (ծփի, կնձնի)») - Հազվագյուտ այս ծառատեսակի մասին հիշատակություն կա «Բազմավեպի» մի խմբագրականում, որը նվիրված է 19-րդ դարի աշխարհագրագետ և բնագետ Գուստավ Ռադդեի առաջին ուղևորությանը Հայաստան (1871). «Ռատտե որ ստեպ բուսոց վրայ կը խօսի..., հօս շատ հետաքննական տեսակ մը կը յիշէ, որ կրնայ մեր երկրին զարդ և պարծանք մ'ալ ըլլալ...: Նախ յԵրևան և յետոյ 'ի Նախիջևան տեսաւ տափակ կնձնիի նման ծառ մը, *Նէշպէնտ* կամ *Նէրպէնտ* կոչուած, զոր կարծէ թէ ոչ միայն 'ի Ռուսաստան չի գտուիր՝ այլ և ոչ Եւրոպա. և այնքան գեղեցիկ և վայելուչ է, կ'ըսէ, որ Եւրոպայի գեղեցկագոյն պարտիզաց ալ զարդ կըրնայ ըլլալ...»²¹: Դժվար չէ համոզվել, որ *Համբարում*-ը հենց Ռադդեի վկայած Nārband և Nālband ծառանունների²² հնչունափոխված ձևն է՝ նարբանդ > նալբանդ > լանբադ > լամբադ > *Համբարում*²³: Հնարավոր ենք համարում, սակայն, որ ծառանվան նախնական տարբերակը հենց *նալբանդ*-ը եղած լինի

²¹ Նոր ուղևորութիւն ի բարձրաւանդակս Հայոց.- Բազմավեպ, հ. ԼԲ, Վենետիկ, 1874, էջ 8:

²² G. Radde, *Reisen an der Persisch-Russischen Grenze. Talysch und seine Bewohner*, Leipzig, 1886, S. 167.

²³ Այս ծառատեսակից միջբարբառի տարածման սահմաններում ընդամենը մի եզակի նմուշ էր աճում Ազնաբերդ գյուղի Քամոտղար լեռան փեշին՝ յուրօրինակ հմայք հաղորդելով գյուղի համայնապատկերին: Ս. Հակոբ մատուռի երկու աղբյուրներից մեկի մոտ աճող այս ծառը զարմանալիորեն չորացավ 1988-ին՝ Ազնաբերդի վերջին գաղթից մի քանի ամիս առաջ:

(պրսկ. نالبند nalband («պայտար»), քանի որ ծառի սաղարթը պայտաձև է:

Ղանձան («բարդի») - Փոխառություն է թուրքերենից (թրք. բրբ. qälämä («բարդի»): Հ. Աճառյանը *կաղամահի* ծառանունը համարում է փոխառություն ուրարտերենից (խալդերենից), իսկ թուրքերեն ձևը նույնացնում *կաղամահու* հետ²⁴, մանավանդ որ պարսկերենի Թեհրանի բարբառում այս ծառանունը կոչվում է تبریزی tabrizi («թավրիզցի, թավրիզյան»), իսկ դա նշանակում է, որ այս ծառատեսակը Հայաստանի հարևան Ատրպատականից է տարվել բուն Պարսկաստան²⁵:

Քանձամբը («կաղամախի») - Թեև համարվում է փոխառություն թուրքերենից (թրք. բրբ. kälämbär («կաղամախի»), այնուամենայնիվ ակնհայտ է բուսանվան կապը հենց հայերեն *կաղամահու* հետ, մանավանդ որ ծառանունը վկայված է ոչ միայն Վանի թագավորության սեպագրերում, այլև հնդեվրոպական լեզուներից թրակերենում²⁶:

²⁴ **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. Բ, Ե., 1975, էջ 492:

²⁵ Նույն տեղում:

²⁶ **Գ. Զահուկյան**, *Հայերենի ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 376:

ՄԻՋԲԱՐԲԱՌԻ ԲՈՒՍԱՆՈՒՆԵՐԸ՝ ԸՍՏ ԾԱԳՄԱՆ

Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները ըստ ծագման կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

Հին հայերենից ավանդված բառեր. *փրորնդադ* (< խոնդատ), *կաջաջ* (< կաճապ), *յաֆշան* (< աւշան, աւշինդր), *կրոթուզ* (< կռատուկ), *դանդալ* (<կանկառ), *տընդըմ* (<դդում), *նանուխ* (< անանուխ), *կինձը* (< գինձ), *կողիմ* (< կոտիմն), *սամիթ* (< սամիթ), *մանըշնիզ* (< մանուշակ), *ծընէփուզ* (< ծնեփեկ), *տախծը//տանխծը* (< դադձն), *ադինջ* (< եդիճ), *սըրէժ* (< շրէշ), *պըդադուզ* (< պատատուկ), *կուռընգա* (< կորնգան), *թըռթընջուզ* (< թրթնջուկ), *սըրգէփուլ* (< սերկնիլ), *տանձ* (< տանձ), *խընձոր* (< խնձոր), *շըլլոր* (<սալոր, շլոր), *ծիրան* (< ծիրան), *նուռ* (< նուռ), *թուզ* (< թուզ), *հադող//հավող* (< խադող), *ուռի* (< ուռ(են)ի), *հացի* (< հաց(են)ի), *անթանն* (< անթառամ), *պոխի*, *պոլի* (< բող), *տախծը//տանխծը* (< դադձն), *խընձոր* (< խնձոր), *տանձ* (< տանձ), *տորէն* (< տորոն) և այլն:

Հին հայերենից չավանդված բառեր. կընջէռ, աշի, խազագ, խընջըլուզ, խըմբաբա, խօռը, լօլօզ և այլն:

Հայերենի բառաստեղծման կանոններով ստեղծված բարբառային բառեր.

ա) համադրական կազմությամբ՝ գիծվանուզ, կադվազանգագ, հավալօլօզ, սարաթութ, սարատանձ, էշակաթնուզ, կ'էլապօխի, շո՛ւշանիզ, շըվնրան, սէվաշըլլօր, հազարաշմբիք, էձամո՛րո՛ւք, կառնափուշ, կաթնուզ, կառնակօթ, պաբապըլլօր, սիպտանգապանջնր, սէվասանուջ և այլն;

բ) հարադրական կազմությամբ՝ ծախկի սնվիլ, մըզան ֆօս, ուլի յէդ, կադվի սնշկ, յէզան լո՛ւգո՛ւ, պըրթօդ ախձան, սարի տէդին ծադիզ, բադի կաբիդ ծադիզ, օխտն ախսօր արին և այլն:

Ուշ շրջանի փոխառություններ. դավախ, թամաշա, դարադաջ. դանլանմ, գանրմնշօվ, բադըմջան, դավուն, ըռէհան, քանվնռ, լալա, խաշխաշ, յնսանման, չօբանքիրբիթի, ֆընդըդ, յէմըշան, շնգըրդան, բադամ, գըլլանր/գըննանր, գիլնս, հո՛ւլի, շնֆտանլու, գո՛ւլմբի, անդանն, չըրադանդանն, դանրանանմ, ռանգի, անկանր, քիշմիշ և այլն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ճահուկ-Վայքի միջբարբառի բառապաշարի բուսանունների շերտը կազմում է բուսանունների բավական գունագեղ մի ներկապնակ, որը կարելի է բաժանել հետևյալ հիմնական իմաստային խմբերի՝ *վայրի խոտաբույսերի անուններ (դադաշ, կըռթուզ, փըռընդադ); վայրի ուտելի և օգտակար խոտաբույսերի անուններ (կառնակօթ, կառնափուշ, ծընէփուզ); մշակովի և բանջարանոցային բույսերի անուններ (տընդըմ, անջաւր, ընէհան); ծաղկանուններ (կուշկօղորիզ, հազարաշնիք, սարի լալա); հատապտղանուններ (հավալօլօզ, շնգըռոյան, կըձօխուր); պտղատու ծառերի և թփերի անուններ (ծիրան, շնֆտանու, սըրգէվու); ոչ պտղատու ծառերի և թփերի անուններ (հացի, թամաշա, քանկմբըռ):*

Ըստ ծագման՝ միջբարբառի բուսանունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ *հին հայերենից ավանդված բառեր (յաֆշան (< աւշան, աւշինդր), դանդալ (<կանկառ), կօղիմ (< կոտիմն); հին հայերենից չավանդված բառեր (կընջէռ, աշի, խըմբաբա); հայերենի բառա-*

ստեղծման կանոններով կազմած բարբառային բառեր
(սարատանձ, էձամհիրո՞ք, սարի տեղին ծաղիգ); ուշ
շրջանի փոխառություններ (դսլսմսմս, բաղբմջան, յսսսս-
մսմն):

ՀԱՎԵԼՎԱԾ

Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունների ցանկ

Վայքի խոտաբույսեր

Բաղադրումը. վարդագույն ծաղիկներով, խորդենու սերմերի նման՝ թռչնի կտուց հիշեցնող սերմերով բույս: Բաղկացած է հայերեն *բաղ* և թուրքերեն *dimdik* («կտուց») բառերից,

գլխի մկրի («գորգի ավել»). նուրբ և փափուկ ցողուններով ցածրիկ բույս, որի ցողուններից գորգ մաքրելու ավել են պատրաստում,

գլխի գլխ («օշան, շոռան, աղաբույս»). թփանման ճյուղավորված տափաստանային բույս, որը անցյալում փովել է տանիքի ծածկի մեջ՝ փայտյա և հողե շերտերի միջև: Փոխառություն է թուրքերենից (թրք. *gəngiz* («աղաբույս»),

գլխի անուգ. աստամնաձև, կլորավուն տերևներով, վարդագույն փոքրիկ ծաղիկներով բույս: Կարծիք կա, որ

բույսը անունը ստացել է հոգեմետ բնույթ ունենալու պատճառով,

դադաշ («տատասկ»)*²⁷,

դսվի փուշ («ուղտափուշ»)²⁸. վարդագույն ծաղիկներով փշոտ բույս, օգտագործվում է որպես անասնակեր (ավանակի և այծի), իսկ վաղ գարնանն աճող դալար ցողունները ուտելի են,

էշակաթնուզ (< *իշակաթնուկ). դեղին ծաղիկներով, դառը կաթ արտադրող ցողուններով բույս, օգտագործվում է որպես ներկանյութ՝ թելը դեղին ներկելու համար,

էշայօնջյւն. սովորական առվույտից բարձր աճող՝ դեղին ծաղիկներով վայրի առվույտի տեսակ՝ իշառվույտ: Երկրորդ արմատը թուրքերենից փոխառյալ *yonca* («առվույտ») բառն է,

խըմբաբա//խըմբաբաբա («խատուտիկ»)*,

ծախկի ւսվիլ (< *ծաղկի ավել). յասամանագույն անթառամ ծաղիկներով լեռնային բույս, որի հասունացած ցողուններից տուն մաքրելու ավել են պատրաստում,

կադվազանգազ (< *կատվազանգակ). սոխուկավոր դառը խնջլոզանման բույս,

կաջաջ (< կաճապ)*,

²⁷ Աստղանիշով բառանունները մանրամասն բերված են «Միջբարբառի բուսանունների իմաստային խմբերը» բաժնում:

կառան տըմագ (< *գառան դմակ). վարդաձև հերթադիր դասավորված հյուրեղ տերևներով լեռնային սուկուլենտ,

կէշապօխի (< *գալլաբոխի). վայրի խոշոր, շատ դառը բուխի: *Sümrü keshapohi* արտահայտությունը կիրառական է «շատ վատ, տհաճ մարդ» նշանակությամբ,

կըռօթուգ (< կռատուկ),

դանդալ (< կանկառ)*,

դարայօնջüü. գետնատարած, մուգ կապտամանուշակագույն ծաղիկներով վայրի առվույտի տեսակ, փոխառված է թուրքերեն բարբառային *qara yonca* («սև առվույտ») ձևից,

ճըռդադուգ (< ճարճատուկ). մանր, դեղին ծաղիկներով բույս, որը նման է խոշոր, կապույտ ծաղիկներով բուն ճարճատուկին (*եղերդակ, ցիկորի*),

յաֆջան (< աւշան, աւշինդր). արմատով հանված և չորացրած օշինդրը (բարձվենյակ) օգտագործվում է որպես թոնրի կաշան և վառելիք,

շըվնրյն. բարձր աճող բույս, որի հասունացած ցողուններից բակ մաքրելու ավել են հյուսում: Հավանաբար բխում է **շիվարան* («շիվ տվող, շիվ անող») ձևից,

չյյիր («սեգ»). փոխառություն է թուրքերենից (թրք. *çayir* («մարգագետին»)),

չօղան («ցմախ»). սպիտակ կամ վարդագույն ծաղիկներով տափաստանային բույս է: Փոխառություն է

թուրքերենից (թրք. çoğan («ցմախ»): Թել ներկելիս օգտագործվում է որպես լվացող-մաքրող միջոց,

պագի անիլ («բակի ավել»): Բանջարանոցներում աճող՝ տարածուն սաղարթով բույս, որի հասունացած ցողուններից բակ մաքրելու ավել են պատրաստում,

պառավապ..իզ. սպիտակ ծաղիկներով և նարնջագույն հաղարջանման պտուղներով բազմամյա թմբաձև բույս: Անվան ծագման մասին որևէ ավանդություն կամ տեղեկություն հայտնի չէ,

սարի սըմբուլ. լեռնային սեզանման բույս, որի շատ գեղեցիկ սերմնաբույլերը քամուց ալիքաձև ծածանվում են,

տօրէն (< տորոն). ներկատու բույս, որի արմատը օգտագործում են որպես ներկանյութ՝ թելը կարմիր ներկելու համար,

սէվաշըլլօր (< *սև սալոր),

ուլի յէդ (< *ուլի յուդ). փափուկ, բամբականման ծաղկաբույլով բույս: Կարծիք կա, որ այդ բույսի ծաղիկներով և սերմնաբույլերով կերակրելիս ուլերը գիրանում են,

ուռիզ (< *ուռիկ). ուռենու ճյուղեր հիշեցնող բազմամյա խոտաբույս, որի ճյուղերը և արմատները օգտագործվում են որպես ներկանյութ՝ թելը սև ներկելու համար,

փրորնդադ (< խոնդատ). հավանաբար բուսանունը ժողովրդական ստուգաբանությամբ է հնչյունափոխվել՝ փոված ծաղկաբույլի պատճառով,

քննարկանդրոսան («փշոտ տափաստանային բույս»)*:

Վայրի ուտելի և օգտակար խոտաբույսեր

Աղինջ (< եղիճ)*,

անգուդան (< անգուտան)*,

աշի («մանդակ»)*,

էճամորոք (< *այծամորոք). սուր հոտով սամի-

թանման փարթամ բույս, ուտելի են դալար ցողունները,

էվէլուզ (< ավելուկ). տեղի է ունեցել ձայնա-
վորների հետընթաց ներդաշնակություն,

ըղորմակօթ (< *ողորմակոթ). Խոյի բարբառում
սօրի անունով հայտնի՝ հովանոցավորների ընտանիքի
մանդականման բույս, ուտելի է թթու դրած վիճակում,

թըրթընջուզ (< թրթնջուկ). օգտագործվում է հում
վիճակում,

խագագ. վայրի սոխ, դանձիլ,

խընջըլուզ (< խնջլոզ),

խիյնրուզ. կապույտ, զանգակաձև ծաղիկներով
բույս, ուտելի են վարունգի համ ունեցող ծաղիկները,

խինձը (< սինձ)*,

խօռը (< *խոռն),

ծընէփուզ (< ծնեբեկ). բարբառային ձևը ստացել է
ժողովրդական ստուգաբանությամբ (*ծընվիլ* և *էփիլ*
բառերից),

կաթնուզ (< *կաթնուկ). խավոտ տերևներով ոչ
բարձր բույս, ուտելի են դալար, քաղցրավուն ցողունները,

կառնակօթ (< *գառնակոթ). վայրի հազար (մառու), ուտելի են կեղևից առանձնացված դալար ցողունները, քանի որ տերևները սովորական մառուից կոշտ են,

կառնափուշ (< *գառնափուշ). *երնջակ* բույսն է, ուտելի են կեղևից առանձնացված դալար ցողունները,

կուռընգա (< կորնգան)*,

ճրդապաշառ (< ճտապաշար), *ճրդապաշառ* (< ծտապաշար), դալար ցողունները և տերևները նախքան ծաղկելը ուտելի են հում վիճակում,

մարալօթի. առանձնահատուկ բուրմունքով ավելուկանման բույս, որը Վայոց ձորում և Գողթնում օգտագործվում է չորթանապուր (*ք'սլլսլճ'օշ*, *ք'սլլսլնճ'օշ*) եփելիս: Փոխառություն է թուրքերենից (թրք.՝ maral otu («եղևկախոտ»)),

յեզան լիւզնի (< եզան լեզու). օգտագործվում է որպես դեղաբույս՝ թարմ, դալար տերևները թրջելով և փակցնելով թարախապալարին,

յոնջսի («առվույտ»). փոխառություն է թուրքերենից (թրք. *yonca* («առվույտ»): Ուտելի են դալար ցողունները,

նըվուզ (< նվիկ),

շսմքսլսլն («այծառվույտ, չաման, շամբալա»).

դեղին ծաղիկներով վայրի առվույտանման բույս, որի ցանովի տարբերակը օգտագործվում է որպես անասնակեր,

շէք. թթվաշ ավելուկ. անունը, հավանաբար, ստացել է շիբի («պաղլեղ») նման թթու համ ունենալու պատճառով,

շֹׁמֵר («վայրի սպանախ»)*,

շֹׁמֵרֵי־הַחַיִּים (< *շուշանիկ («շուշանբանջար»)). դալար վիճակում տապակում են, նաև կտրատած համեմում թանապուրը, իսկ դալար ցողունները ուտելի են հում վիճակում կամ թթու դրած,

չֹרֶאֶן־חֵרֶרֶת. հայտնի *հազարտերևուկ* դեղաբույսն է, որի նորածիլ դառնավուն ցողունները խաշելուց և սառը ջրում որոշ ժամանակ պահելուց հետո տապակում են: Փոխառություն է պարսկերենից. պրսկ. چوپان čupan («հովիվ») և کبریت kebrit («լուցկի») բառերից կազմված բարդության թուրքերենացած ձև է՝ çobankibriti, բառացի՝ «հովվի լուցկի»: Հավանաբար նկատի է առնվել հազարտերևուկի՝ լուցկու հատիկներին շատ նման չորացած ցողունները,

պարապրլլօր. սնձանման բույս, ուտելի են կեղևից մաքրած կլորավուն արմատապալարները,

պանջնր («սալիտակաբանջար»)*,

պրդադուզ (< պատատուկ). կտրատած դալար ճյուղերով և տերևներով համեմում են թանապուրը,

պրոթօդ ախձան. թելուկազգիների ընտանիքի հայտնի *պարոնբանջար* բույսն է, օգտագործվում է խաշած և կարմիր պղպեղով համեմված,

պօխի, պօլի (< բող)*,

սարի ծանդաք. բույս, որի արմատից հոսող կաթը արևի տակ չորացնելով՝ ծամոն են պատրաստում: *Շանդաք* բառը միջբարբառի՝ բաղարկությամբ (կոնտամի-

նացիա) կազմված սակավաթիվ բառերից է՝ ծամոն + մասստակ > *ծամդաք* > *ծանդաք*,

սըխտօփի (վայրի սխտոր),

սըրէժ (< շրէշ). բառասկզբի շ-ն տարնմանությամբ դարձել է *ս*:

սիբեդ (< սիբեխ),

սիպտսնգապսնջսր (< սպիտակաբանջար). լայնատերև տեսակը կոչվում է *սնլսնգսնգ*,

սունգը (< սունկն), *ջիմսնսնսունգը* («շամպինյոն, ագարիկոն»). վերջինս անունը ստացել է մարգագետիններում (*ջիմսն*), արտերում աճելու պատճառով,

տախծը//տսնխծը (< դադան),

տսնդուռ (< դանդուռ). օգտագործվում է խաշած, նաև քացախով համեմված,

փիփեռթ (< փիփերթ), օգտագործվում է խաշած կամ որպես փիփերթապուրի բաղադրամաս,

Ֆընդըդ. մանուշակագույն գեղեցիկ ծաղիկներով գետնատարած բույս, վաղ գարնանը ուտելի են հողից հանած և լվացած՝ պնդուկի մեծության արմատապալարները: Փոխառություն է թուրքերենից (թրք. բոժոզ («պնդուկ»),

ֆօս («գազ»)՝:

Մշակովի և բանջարանոցային բույսեր

Լճյւն (< հաճար). պատյանից չմաքրած հաճարը կոչվում է *փւնդինջ*, որը փոխառություն է պարսկերենից (պրսկ. برنج berenj («բրինձ»),

բաղըմջան («լոլիկ»)*,

գոննաբախան//*գոննաբախան* («արևածաղիկ»). փոխառություն է թուրքերենից (թրք. günebakan («արևածաղիկ»),

լօբի (<լոբի<լովիաս)*,

խիյւն («վարունգ»). պրսկ. خیار xiyār («վարունգ»),

ծըմէրուզ (< ձմերուկ),

կէնէփ (< կանեփ). սերմերը օգտագործվում են աղանձի մեջ, ինչպես նաև բուսայուղ (*խին*) պատրաստելիս (հավանգով ծեծած զանգվածը գոլ ջրում լուծելով, ապա քամելով),

կընջէո («կանճրակ»)*,

կարի (< գարի),

կուզուռուզ//*փըղսմբսն*//*փըխսմբսն* («եգիպտացորեն»)*,

դավուն («սեխ»)*,

շամամ («կլոր, բուրավետ, քաղցր սեխ»),

պըրիհնձ (< բրինձ),

սէվ բաղըմջան («սմբուկ»). պրսկ. بادنجان bādenjān («սմբուկ»): *Մէվ* բաղադրիչը հավելվել է միջբարբառում լոլիկին *բաղըմջան* անվանելու հետևանքով,

տախտէղ (< տաքդէղ),

տընդըմ (<դդում)*,
ցորէն (< ցորեն),
նանուխ (< անանուխ),
թէր («ծոթրին, կորթին») (< *թեր)*,
ըռէհան («ասպրամ»). փոխառություն է արաբե-
 րենից (արաբ. ریحان *raihān* («ասպրամ»),
կինձը (< գինձ),
կողիմ (< կոտիմն)*,
սամիթ (< սամիթ),
քււվւն («պրաս»)*:

Ծաղկանուններ

Անթւննւն (< անթառամ). տեղի է ունեցել բաղա-
 ձայնների առաջընթաց առնմանություն,
բաղի կաբիդ ծաղիզ («տերեփուկ»)*,
լալա. արևելյան կակաչ, փոխառություն է պարս-
 կերենից (պրսկ. لاله *lāle* («կակաչ»),
խաշխաշ. խոշոր արևելյան կակաչ՝ խաշխաշ,
 փոխառություն է պարսկերենից (պրսկ. خشخاش *xašxāš*
 («խոշոր կակաչ»),
ծընծաղիզ (< ձնծաղիկ). շուշանագգիների ընտա-
 նիքի վարդագույն, երկնագույն կամ սպիտակ ծաղիկ-
 ներով ծաղկաբույս է՝ ի տարբերություն իրական ձնծաղ-
 կի, որը շքանարգիզագգիների ընտանիքին պատկանող
 սպիտակ ծաղիկներով նարգիզանման ծաղկաբույս է,
կուշկողրիզ (< կուժկոտրուկ)*,

հազարաշնրիք (< *հազարաշապիկ). հիրիկազգի-
ների ընտանիքի փոքրիկ, դեղին հիրիկանման ծաղիկ,
մանըշնգ (< մանուշակ),

յսսսմսն («եղրեանի»). փոխառություն է արաբե-
րենից (արաբ. ياسمين yasmin («հասմիկ»)),

չումախալալա, օխտն ախպօր արին («ալ կարմիր
թավշանման ծաղիկ»)*,

ջանգոնլոմի ծաղիգ. սպիտակ ծաղիկներով երեք-
նուկ: Համբարձման տոնի ծաղկեփնջի հիմնական ծա-
ղիկն է, ինչպես այլ շրջաններում՝ *հորոտ-մորոտը, գնար-
բուկը* և այլն,

սարի լալա. լեռնային վարդակակաչ,

սարի տեղին ծաղիգ («լեռնային գնարբուկ»)*,

սէվ լալա. մուգ մանուշակագույն, կարճ ցողունով
վայրի խոշոր հիրիկ,

սիրի-սիրի. վարդագույն ծաղիկներով երեքնուկ,

վառժ (< վարդ),

փիփեռժածաղիգ («տուղտ»). տարածաշրջանում
աճում է հատկապես բաց դեղին ծաղիկներով վայրի
տեսակը:

Հատապտղանուններ

Կրճօխուր (< կծոխուր),

հավալօլօգ («վայրի բալ»)*,

մրհասուր (< մասուր)*,

յէմըշւն. բազմակորիզ, նարնջագույն կամ մարջանագույն ալոճ,

շնգըռդւն («դեղին մասուր»)*,

սարաթուր (< սարի թուր). գետնատարած փոքր բույս, որը ամռան սկզբին վառ կարմիր, թթանման, սակայն անհամ պտուղներ է տալիս,

սարատանձ (< սարի տանձ), *քըռօսիզ*. վայրի մանր տանձ (պանտա),

սէվասանուջ (< *սև սոնիճ)*,

սինձը (< սինձ). միակորիզ կամ երկկորիզ, մուգ կարմիր ալոճ, ծառանման թուփ է,

քւնվւն (< կապար)*:

Պտղատու ծառեր և թփեր

Բադամ («նուշ»). փոխառություն է պարսկերենից (պրսկ. بادام bādām («նուշ»),

գըլլւնր/գըննւնր («բալ»)*,

գիլնւս («կեռաս»). փոխառություն է պարսկերենից (պրս. گیلās gilās («կեռաս»),

թուզ (< թուզ),

հաղօղ/հալօղ (< խաղող)*,

խընձօր (< խնձոր),

ծիրան (< ծիրան),

հոլի («նարինջ դեղձ»), փոխառություն է պարսկերենից, (պրսկ. هلو holu («դեղձ»),

նուռ (< նուռ),

շահտայլու («կորիզից պոկվող դեղձ», «կորիզից չպոկվող՝ սպիտակ դեղձ»)*,

շըլլօր (< շլոր, սալոր),

պօրօք («ընկույզ»). Օծոփի խոսվածքում առկա է *բօրօք* հնչատարբերակը (պոպոք > պօրօք > *բօրօք*): Պտուղների կանաչ կեղևները օգտագործում են որպես ներկանյութ՝ թելը շատ մուգ սև (*ջըմդիք սէվ*) ներկելու համար,

սէվաշըլլօր (< *սևասալոր). շատ թթու խոշոր սալոր: Թթվությունը մեղմելու համար ուտում են աղով,

սըրզէվուլ (< սերկևիլ),

տամբուլ (< դամոն),

տանձ (< տանձ),

փըշաղ (< փշատ). մանր, թթվաշ պտուղներով տեսակը կոչվում է *նախրափըշաղ* կամ *նըխրափըշաղ*,

ֆընդըղ («պնդուկ, տկողին»). փոխառություն է թուրքերենից (թրք. բրբ. fəndəq («պնդուկ, տկողին»):

Ոչ պտղատու ծառեր և թփեր

Քարմսյժով («իլենի»). գորշավուն տերևներով թուփ, որի ճկուն ճյուղերից բուրդ ծեծելու ճիպոտ (*հա-դարարիզ*) են պատրաստում: Փոխառություն է թուրքերենից (թրք. gərməşov («իլենի»),

թամաշա («երկնածառ»). փոխառություն է պարսկերենից (պրսկ. تماشا tamāšā («դիտարժան»)),

լսմքսն («գնդաձև խիտ թեղի»)*,

կենի («գիհի»). ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել հնչյունափոխություն *գհհենի* միջանկյալ ձևից՝ գիհի > *գիհենի > *կիհենի > *կենի*,

հացի (< հացենի),

ղնլնմն («բարդի»)*,

ղավախ արծաթափայլ բարդի, փոխառություն է թուրքերենից (թրք. kavak, թրք. բրբ. qavax («բարդի»),

ղարաղաջ («թեղի»). փոխառություն է թուրքերենից (թրք. բրբ. qarağac («թեղի», բառացի՝ սևածառ (qara ağac («սև ծառ»)),

ռռի (< ռռենի),

ցըխսվիլ (< ցախավել). կարմիր պտուղներով, գորշավուն տերևներով ոչ բարձր թուփ, որի ճկուն ճյուղերից ցախավել (*ցըխսվիլ*, *կօմի սսվիլ*)՝ գոմ մաքրելու ավել են պատրաստում,

քնլսմքռ («կաղամախի»)*:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղ., Այրարատ. բնաշխարհի հայաստանեայց, Վենետիկ, 1890:

Ալիշան Ղ., Հայքուսակ կամ հայկական բուսաբառություն, Վենետիկ, 1895:

Աղայան Է., Բարբառային հնագույն տարբերություններ հայերենում.– ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների տեղեկագիր, թիվ 5, Ե., 1958:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Ե., 1971:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Ե. 1973:

Աճառեան Հ., Քննություն Ագուլիսի բարբառի, Ե., 1935:

Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:

Գաբիկեան Կ., Հայ բուսաշխարհ, Երուսաղեմ, 1968,

Խաչատրյան Հ., Բառիմաստային յուրօրինակ զարգացումները Համշենի բարբառում.– Գ. Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հայերենագիտական գիտաժողովի նյութեր, Ե., 2020:

Խոսրովեան Ժ., Բուսաբանական պատկերազարդ բառարան պարսկերեն-հայերեն, Թավրիզ, 1991:

Հայերեն բացատրական բառարան, կազմեց Ս. Մալխասեանց, Կ. Բ, Ե., 1944:

Ղազարյան Ռ., Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան, Ե., 1981:

Մեսրոպյան Հ., Բուսանունները «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում», Ա. Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., 2020:

Մեսրոպյան Հ., Բուսանունները Ղ. Ալիշանի «Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց» աշխատության մեջ, « Ղևոնդ Ալիշան - 200» հոբելյանական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., 2021:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Կ.1, Վենետիկ, 1836:

Ջահուկյան Գ., Հայերենի ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Սիմոնյան Լ., Ծառ-ծաղկաբաղիկ, Ե., 2017:

Վարդանյան Ա., «Գիլգամեշի» Խումբաբան և հայերեն բարբառային խմբաբա բուսանունը, Իրան-Նամե, Կ. 37, 2001:

Վարդանյան Ա., Ճահուկ-Վայքի միջբարբառի տարածման պատմական սահմանները.– Գ. Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված «Արդի հայերենագիտության խնդիրները» առցանց գիտաժողովի նյութեր, Ե., 2020:

Վարդանյան Ա., Նախիջևանի բարբառային քարտեզը.–
Հանդես ամսօրեայ, հ. 1-12, Վիեննա, 2000:

Վարդանյան Ա., Վայոց ձորի միջբարբառը, Ե., 2004:

Radde G., Reisen an der Persisch-Russischen Grenze: Talysch und seine Bewohner, Leipzig, 1886.

Vardanyan A., The Assyro-Babylonian Khumbaba and the Armenian Plant Name Khmbaba, Iran & the Caucasus, V, Tehran, 2001.

خسرویان ژ., فرهنگ مصور گیاهی فارسی-ارمنی، تبریز، 1991.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

արաբ. – արաբերեն

բրբ. – բարբառային

թրք. – թուրքերեն

պրսկ. – պարսկերեն

ռուս. – ռուսերեն

ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

Բանալի բառեր. Վայոց ձոր, Ճահուկ, Նախիջևան, բուսանուն, ծառ, թուփ, հատապտուղ:

Վարդանյան Արտակ – Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները.– Բուսանունները բարբառների բառապաշարի ամենակիրառական շերտերից են, որոնք բացահայտում են ոչ միայն կրողների ավանդույթներն ու ազգագրական առանձնահատկությունները, այլև տարբեր ժամանակաշրջաններում այլ ժողովուրդների հետ ունեցած շփումները:

Կարևորելով յուրաքանչյուր բարբառային միավորի բուսանունների առանձին ամբողջական ուսումնասիրությունը՝ հոդվածում քննվում է Ճահուկ-Վայքի միջբարբառի (Վայոց ձորի և հյուսիսային Նախիջևանի շուրջ մեկ տասնյակ տեղաբնիկ բնակավայրեր) բառապաշարի այս հետաքրքիր շերտը:

Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները կարելի է բաժանել հետևյալ հիմնական իմաստային խմբերի՝ *վայրի խոտաբույսեր (ղաղաշ, կրթոթուզ, փրորնդաղ)*; *վայրի ուտելի և օգտակար խոտաբույսեր (կառ-*

նակօթ, կառնափուշ, ծրնեփուզ); մշակովի և բանջարանոցային բույսեր (տրնդըմ, անջար, բռնեհան); ծաղկանուններ (կուշկօղորիզ, հազարաշանփիք, սարի լալա); հատապտղանուններ (հավալօլօզ, շնգրողյան, կրձօխուր); պտղատու ծառեր և թփեր (ծիրան, շնֆտանլու, սրբփվուլ); ոչ պտղատու ծառեր և թփեր (հացի, թամաշա, քանկամբրո):

Ըստ ծագման՝ միջբարբառի բուսանունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ հին հայերենից ավանդված բառեր (յաֆշան (< աւշան, աւշինդր), դանդալ (<կանկատ), կօղիմ (< կոտիմն); հին հայերենից չավանդված բառեր (կրնջէռ, աշի, խրմբաբա); հայերենի բառաստեղծման կանոններով կազմած բարբառային բառեր (սարատանձ, էձամնիրոփ, սարի տեղին ծաղիզ); ուշ շրջանի փոխառություններ (դանլանս, բաղըմջան, յանսանսն):

Keywords: Vayots dzor, Jahuk, Nakhijevan, plant name, tree, shrub, berry.

Vardanyan Artak – The Plant Names of the Jahuk-Vayk Interdialect.– The names of plants are one of the most commonly used layers of the vocabulary of dialects, which reveal not only the traditions and ethnographic characteristics of the speakers, but also contacts with other peoples in different time periods.

Given the importance of a separate integral study of the names of plants of each dialect unit, this interesting layer of the vocabulary of the Jahuk-Vayk interdialect (spoken in about a dozen settlements with autochthonous populations in Vayots Dzor and northern Nakhichevan) is examined in the article.

Based on meaning, the names of plants of the Jauk-Vayk interdialect can be divided into the following groups: wild herbaceous plants (*դադաժ* *dadaš* ("star-thistle"), *կոթոթուկ* *kəṛot'ug* ("burdock"), *փրփրակ* *p'əṛəndad* ("mullein"); edible and useful wild herbaceous plants (*կանաչկոթ* *kāṇakot'* ("wild lettuce"), *կանաչկոթ* *kāṇap'uš* ("eryngium"), *ծղմկոթ* *cəṇep'ug* ("asparagus"); cultivated and garden plants (*տոթմ* *təndəm* ("pumpkin"), *սփյուռ* *äjār* ("spelt"), *բազիլ* *əṛehan* ("basil"); flower names (*կարմիր* *kuškodrig* ("red adonis"), *հազարափայտ* *hazarašābik'* ("yellow iris"), *սարի լալա* *sari lala* ("mountain tulip"); berry names (*հալալոց* *havalolog* ("wild cherry"), *սպիտակ* *šägərdän* ("yellow wild rose"), *կարմիր* *kəjoxur* ("barberry"), fruit trees and bushes (*ծղմ* *ciran* ("apricot"), *սպիտակ* *šäftälu* ("peach"), *սրբ'եղ* *sərg'evul* ("quince"); non-fruit trees and bushes (*հաղի* *hac'i* ("fraxinus"), *թափաշ* *t'amaša* ("ailanthus"), *քաղն* *k'älāmbər* ("aspen").

Based on origin, the interdialect plant names can be divided into the following groups: words attributed to Classical Armenian (*յաֆսան* (< *աշան*, *աշհն*) *yafsan* ("artemisia"), *դանիալ* (< *դան*, *կանի*) *gangal* ("onopordum"), *կոթմ* (< *կոթմ*) *kodim* ("cress"); not attested in Classical Armenian words (*դանիալ* *xəmbaba* ("dandelion"), *կարմիր* *kəñer* ("safflower"), *աշի* *aši* ("astrodaucus"); dialect words composed

according to the rules of composition of the Armenian language (*էձաւմիւրիք ejamürük* ("wild dill"), *ւալիւմիւրիք* ("wild pear"), *ւալիւրի տէղիւրի ծաղիկ* ("primrose"); late borrowings (*դիւրմիւրի գալեմա* ("poplar"), *բալիւրիւրի badəmjan* ("tomato"), *յիւմիւրիւրի yäsämän* ("lilac").

Ключевые слова: Вайоц Дзор, Джаук, Нахиджеван, название растения, дерево, кустарник, ягода.

Варданян Артак – Названия растений междиалекта Джаук-Вайка.– Названия растений являются самыми употребляемыми слоями лексики диалектов, которые выявляют не только традиции и этнографические особенности носителей, но и имевшиеся с другими народами в различные временные периоды контакты.

Учитывая важность отдельного цельного исследования названий растений каждой диалектной единицы, в статье исследуется этот интересный слой лексики междиалекта Джаук-Вайка (говоры около десятка авхтонных населенных местностей Вайоц Дзора и северного Нахиджевана).

По смысловому значению названия растений междиалекта Джаук-Вайка можно разделить на следующие группы: *дикие травяные растения* (*դիւրմիւրիք dadaš* ("якорец"), *լոբորճիք kərot'ug* ("лопух"), *կորովայիք p'əṛəndad* ("коровяк"); *дикие съедобные и полезные травяные растения* (*կախմիւրիք kaṭnakot* ("дикий латук"), *կախմիւրիք kaṭnar'uš* ("синеголовник"), *ծրիւմիւրիք səper'ug* ("спаржа"); *культивируемые и огородные растения* (*տըմիւրիք təndəm* ("тыква"), (*յիւմիւրիք ājār* ("полба"), *բալիւրիք əṛehan* ("базилик");

названия цветов (*կուշկօղորիզ* *kuškodrig* ("красный адонис"), *հազարիշչյւրիք* *hazarašābik* ("желтый ирис"), *ւարի լալի sari lala* ("горный тюльпан"); названия ягод (*հալալօղօզ* *havalolog* ("дикая вишня"), *շչյւրորդիւն* *šāgər'dān* ("желтый шиповник"), *կրճօխուր* *kəjoxur* ("барбарис"), плодовые деревья и кусты (*ծիրան* *ciran* ("абрикос"), *շչիֆուր* *šāftālu* ("персик"), *ւրրգ'էվու* *sərg'evul* ("айва"); не плодовые деревья и кусты (*հացի* *has'i* ("ясень"), *թաթա* *t'ataša* ("айлант"), *բ'ւնիւր* *k'älāmbər* ("осина").

По происхождению названия растений междиалекта можно разделить на следующие группы: засвидетельствованные в древнеармянском языке слова (*շիշիւն* (< *ւշիւն*, *ւշիւն*) *uŋšan* ("полынь"), *ղիւղիւ* (< *ղիւղ*, *ղիւղիւ*) *gāḡal* ("татарник"), *կոճիւ* (< *կոճիւն*) *kodim* ("клоповник"); не засвидетельствованные в древнеармянском слова (*խրիւրիւրի* *xətbaba* ("одуванчик"), *կրնշէր* *kənjər* ("сафлор"), *ւշի* *aši* ("морковница"); диалектные слова, составленные по правилам словосложения армянского языка (*էճիւնիւր* *ejamürük* ("дикий укроп"), *ւարիւնիւն* ("дикая груша"), *ւարի* *ւնէղիւն* *ուրիւ* *ur-i* ("первоцвет"); заимствования позднего периода (*ղիւնիւն* *gäläntä* ("тополь"), *բաճման* *badəmt'an* ("помидор"), *յայնիւն* *yäsämān* ("сирень").

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից	5
Նախաբան	10
Միջբարբառի բուսանունների իմաստային խմբերը	16
Միջբարբառի բուսանունները՝ ըստ ծագման	33
Եզրակացություն	35
Հավելված	37
Օգտագործված գրականություն	51
Համառոտագրություններ	54
Ամփոփումներ	55

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, գրող, թարգմանիչ, Արտակ Վարդանի Վարդանյանը ծնվել է 1951 թ. մայիսի 4-ին Նախիջևանի Ազնաբերդ գյուղում:

1973 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիրառական ֆակուլտետը, 1988-ին՝ նույն ինստիտուտի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետի լրագրության բաժինը (գերազանցությամբ): 2004 թվականին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Վայոց ձորի խոսվածքների լեզվաաշխարհագրական բնութագիրը» թեմայով:

Ուսումնասիրել է հյուսիսային Նախիջևանի և Վայոց ձորի խոսվածքները (Ճահուկ-Վայքի միջբարբառ), ինչպես նաև պատմական Գողթնի հյուսիսային խոսվածքները (Հյուսիսային Գողթնի միջբարբառ): Կազմել է Նախիջևանի բարբառային քարտեզը:

Հեղինակ է 17 գրքի, այդ թվում՝ 3 մենագրության, չորս տասնյակ գիտական հոդվածների:

1996-1998 թվականներին եղել է «Նախիջևան» հայրենակցական միության նախագահը:

Ունի ՀՀ քաղաքացիական ծառայության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

Հայաստանի լրագրողների միության և գրողների միության անդամ է:

Պարգևատրվել է ՀՀ նախագահի շնորհակալագրով (2007), Հայաստանի գրողների միության «Գրական վաստակի համար» մեդալով (2011), Մովսես Խորենացու մեդալով (2011):

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՃԱՀՈՒԿ-ՎԱՅՔԻ ՄԻՋԲԱՐԲԱՆԻ ԲՈՒՍԱՆՈՒՆԵՐԸ

АРТАК ВАРДАНОВИЧ ВАРДАНЯН
НАЗВАНИЯ РАСТЕНИЙ ДЖАУК-ВАЙКСКОГО
МЕЖДИАЛЕКТА

ARTAK V. VARDANYAN
THE PLANT NAMES OF THE JAHUK-VAYK
INTERDIALECT

Համակարգչային ձևավորումը՝ Սևակ Արևշատյանի
էջադրումը՝ Մելանյա Խառատյանի
Շապիկը՝ Աշոտ Համբարձումյանի և Արաբո Սարգսյանի
Վերստուգող սրբագրիչ՝ Վարդուհի Խաչիբաբյան

*Շապիկի առաջին էջին՝ հավալուօգ (վայրի բալ),
վերջին էջին՝ լամբւոդ (գնդաձև թեղի)*





ISBN 978-9939-9298-0-4



9 789939 929804